

1529

Yonef
Youngport

W. S. S.

2(075)

21-83

1902

03 AUG 2009

21075
U-83

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Ի
Ս
Ն
Ի
Ջ
Ա
Ի
Ա



Դ
Մ
Ջ
Ա
Բ
Ե
Կ
Ս
Ա
Գ

220
594-ՄՆ

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԽՈՐԷՆ ՔԱՅԱՆԱՅ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆՑ
Միսրան Ա. Պետերր. Հայոց եկեղեցուց:

Ա. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ՊԻՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1902

220

594-ՆՆ

21075
Մ-83 ԱԿ.


ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ

Ա. ՏԱՐԻ

220

596-ՆՆ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ



Կ Ա Ջ Մ Ե Ց

ԽՈՐԷՆ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՅԱԿԱՆԵԱՆՑ

Միաբան Ս. Պետերր. Հայոց եկեղեցու



ՇԻՄԵՆ

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ

«ԳՈՒՀԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏԳԱՐԱՆ

1902

Հստ բարձու հրամանի Նորին Ս. Օծուծեան Վեհափառ Հայրապետի ազգիս, Դիւանս թոյլատրէ զտպագրութիւն դասագրոյս:

Դիւանապետ՝
Կարէն Լարյան

Ի 18 Հոկտեմբերի 1901 թ.
'ի ք. Տփլիս:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 Ноября 1901 года.

Յ Ա Ռ Ա Չ Ա Բ Ա Ն

Սոյն կրօնի դասագիրքը լոյս է ընծայւում պետական դպրոցների հայ երեխաների համար: Թէև մինչև այժմ լոյս տեսած կան արդէն մի քանի դասագրքեր, բայց սա էլ, մեր կարծիքով, կարող է իւր համեստ սեղը ունենայ:

Դասաւանդութեան նիւթը բաժանուած է երեք մասի:— Առաջին մասը բովանդակում է իւր մէջ տասն հասամենագործածական աղօթքներ՝ աշխարհաբար թարգմանութեան հետ միատեղ: Երկրորդ մասը ունի — «Տասը պատուիրանը» և «Հաւատի հանգանակը»: Տասը պատուիրանին կցել ենք համառօտ բացատրութիւն, որից աւելին տալը այս տարուայ շոշանում միտք չունի: Հաւատի հանգանակը դրել ենք զրաբար և աշխարհաբար: Իսկ սրա բացատրութիւնը երեխան կը սովորի յետագայ տարիներում՝ «Քրիստոնէական վարդապետութիւն» ուսանելիս: Երրորդ մասը բովանդակում է իւր մէջ տասն և հինգ պարզ պատմութիւններ՝ Նոր Կաակարանից վերջրած, որոնց միջոցով էլ երեխան կը սովորի մեր եկեղեցւոյ գլխաւոր տօները:

Պատմութիւնները կազմելիս մենք աշխատել ենք որքան հնարաւոր է, տալ միայն հում նիւթը — բնագիրը, թողնելով որ պարաւածանաչ ուսուցիչը ինքը այդ նիւթը մշակէ ու լուսաբանէ: Բայց որպէսզի այս վերջիններին ևս

մի քիչ զիւրութիւն տուած լինինք՝ իրանց պաշտօնը յաշտութեամբ կատարելու, զրքոյկիս վերջը, ամեն մի պատմութեան համար, գրել ենք նախապարտաւորութիւն:

Ուսուցիչը, պատմութիւնը աւանդելուց առաջ, պէտք է պատմէ նախ նրա նախապատրաստութիւնը: Սա մանուկներին հնարաւորութիւն կտայ՝ պատմութիւնը լսելիս, հէնց առաջին անգամից բմբռնել պատմութեան նիւթի էութիւնը՝ դոնէ պիտաւոր կէտերում: Իսկ ուսուցչի կողմից տրուած բացատրութիւնը մնացածը կը պարզէ ու կը լուսարանէ:

Արդեօք այս կրօնի Դաստիարակը, իւր բովանդակութեամբ ու նիւթերի դասաւորութեամբ մի արժանաւորութիւն ներկայացնում է թէ ոչ այդ մասին կարող են դատել իւր ժամանակին արժ. կրօնուսուցիչները: Բայց մի արժանաւորութիւն, որ ակներե է, ոչ ոք չի ժխտիլ — այդ զրքի պատկերազարդ լինելն է: Ամենօրեայ փորձը մեզ ցոյց է տալիս, որ իրազննական պարզ ուսուցման շնորհիւ, մանուկը միայն մի հայեացքով աւելի լաւ և ուղիղ է իւրացնում պատմութեան միտքը, քան երկար բացատրութիւններ լսելով:

ԽՈՐԷՆ ՔԱՀ. ՄՆԱՑԱԳԱՆԵՆԱՆՑ:

1 Օգոստոսի 1902 թ.

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

1. Յանուն հօր և Որդւոյ հօր, Որդու և Սուրբ և հոգւոյն Սրբոյ. ամէն: հոգու անունով. ամէն:

2. ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հայր մեր, որ յերկինս ես. սուրբ եղիցի անուն Բո. եկեսցէ արքայութիւն Բո. եղիցին կամք Բո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազօրդ տո՛ւր մեզ այսօր. թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ. զի Բո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

Մեր Հայր, որ երկնքումն ես. սուրբ լինի Բո անունը. զայ Բո թագաւորութիւնը. լինի Բո կամքը ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրիս վրայ. մեր ամենօրուայ հացը տո՛ւր մեզ այսօր. ների՛ր մեզ մեր պարտքը, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք ներում: մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ ազատի՛ր մեզ չարիցը. որովհետեւ Բոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը՝ յաւիտեանս. ամէն:

3. ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Անկանիմք առաջի Քո, սուրբ Աստուածածին, և աղաչեմք զանարատ զԿոյսդ: Բարեխօսեա՛ վասն անձանց մերոց և աղաչեա՛ զՄիածին Որդիդ, փրկել զմեզ ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց:

Ընկնում ենք Քո առաջ, սուրբ Աստուածածին, և աղաչում ենք անարատ Կոյսիդ. բարեխօս եղի՛ր մեզ համար և աղաչի՛ր Միածին Որդուդ, որ ազատէ մեզ փորձանքից և ամեն տեսակ վտանգից:

4. ԱՂՕԹՔ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա՛ մեզ:

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր Աստուած, սուրբ և անմահ Աստուած, որ մեզ համար խաչուեցիր, ողորմի՛ր մեզ:

5. ԱՂՕԹՔ ԱՌԱԻՕՏԵԱՆ

Ամենակալ Աստուած, որ ծագեցեր զլոյս առաւօտու յարարածս Քո, ծագեա՛ և այժմ՝ զառատ ողորմութիւն ի վերայ փառաբանչացս անուան Քո սրբոյ:

Ամենակարող Աստուած, Դու, որ ուղարկեցիր առաւօտեան լոյսը Քո արարածների վրայ, այժմ էլ ուղարկի՛ր առատ ողորմութիւնդ Քո սուրբ անունը փառաբանողների վրայ:



6. ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Փառք Քեզ, Տէր Աստուած մեր, որ պարզեցեր զօրս զայս բարեաւ և խաղաղութեամբ անցուցանել: Մարգասէր Աստուած, զառաջիկայ զիշերս, որ ի վերայ մեր գալոց է, ի մեղաց փրկեա՛, ի չարեաց ազատեա՛ և ի գործս բարիս առաջնորդեա՛:

Փառք Քեզ, մեր Տէր Աստուած, որ արժանացրի՛ր մեզ լաւ ու խաղաղ անցկացնելու այս օրը: Մարգասէր Աստուած, այս զիշեր էլ, որ անցկացնելու ենք, մեղքից փրկի՛ր, չարից ազատի՛ր և դէպի՛ բարի գործերը առաջնորդի՛ր:

7. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ԱՌԱՁ

Աչք ամենեցուն ի Քեզ, Տէր, յուսան՝ և Դու տաս կերակուր նոցա ի ժամու: Բանաս զձեռն Քո և լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ կամօք Քովք:

Տէր Աստուած, ամենքի աչքերը դէպի Քեզ են դարձած, Դու ես տալիս նրանց կերակուր իւր ժամանակին: Բաց ես անում ձեռքդ և լիացնում ես ամենքին Քո ողորմութիւնով:

8. ԱՂՕԹՔ ՃԱՇԻՑ ՅԵՏՈՅ

Տէր Յիսուս, լցաք ի բարութեանց Քոց, տացուք զոհութիւն Տեառն Աստուծոյ մերոյ՝ հօր և Որդւոյ

Տէր Յիսուս, լիացանք Քո բարիքներով, շնորհակալութիւն անենք մեր Տէր Աստծուն՝ հօրը, Որդուն և

և հոգւոյն Սրբոյ: Զլիութիւն սեղանոցս անհատ և աննուա՛յց արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց՝ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Սուրբ հոգուն: Մեր Աստուած Քրիստոս, որ մեզ կերակրեց ու լիացրեց, թող անվերջ ու անպակաս անէ այս սեղանի լիութիւնը. նրան յաւիտեանս փառք. ամէն:

9. ԱՂՕԹՔ ԹԱԳԱԻՈՐԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, կեցո՛ր զամենաբարեպաշտ թագաւորն մեր և զկայսրն ամենայն Ռուսիոյ Նիկոլայ Ալէքսանդրովիչն: Զորացո՛ր զնա և անսասան պահեա՛ր զթագաւորութիւն նորա մինչև ի կատարած աշխարհի:

Տէր Աստուած մեր, կեանք տուր մեր ամենաբարեպաշտ թագաւոր և ամբողջ Ռուսիայի կայսր Նիկոլայ Ալէքսանդրովիչին: Զօրացրո՛ւ նրան և հաստատ պահիր նրա թագաւորութիւնը մինչև աշխարհի վերջը:

10. ԱՂՕԹՔ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ

Տէր Աստուած մեր, պահեա՛ր զՄայր Աթոռն մեր Սուրբ Էջմիածին և զգահակալ նորին զՏէր Տէր Մկրտիչ սրբազնագոյն կաթողիկոսն ի փառս և ի պարծանս ազգիս Հայոց:

Տէր Աստուած մեր, պահպանիր մեր Մայր Աթոռ սուրբ Էջմիածինը և նրա գահակալ Տէր Տէր Մկրտիչ սրբազնագոյն կաթողիկոսին՝ Հայոց ազգի փառքի ու պարծանքի համար:



ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

1. ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆ

I. Ես եմ՝ Տէր Աստուած քո: | Ես եմ՝ քո Տէր Աստուածը:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է, որ մենք ամեն բանից աւելի նրան սիրենք և նրա վրայ դնենք մեր յոյսը:

II. Մի եղիցին քեզ այլ | Բացի Ինձանից ուրիշ աստուածք բաց յինչն: | աստուածներ մի՛ ունենար:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է, որ մենք ուրիշ աստուածներ, այսինքն կուռքեր չը պաշտենք, այլ միայն ճշմարիտ Աստուծուն ձանաչենք և նրան պաշտենք:

III. Մի առնուցուս զանուն Տեառն Աստուծոյ քո | Բո Տէր Աստուծու անունը ի վերայ սնտեաց: | զատարկ բաների վրայ մի՛ յիշիր:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է, որ մենք նրա անունով չ'երգուենք, սուտ չը խօսենք և չը խաբենք:

IV. Յիշեա՛ սրբել զօր | Շարաթ օրը սուրբ պաշարաթու: | չիր:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ շահութի օրը, այսինքն կիրակի և տօն օրերը, սուրբ դործերով զբաղուենք, այն է—եկեղեցի գնանք, սովորենք Աստուած պատուիրանները և այն բաներն անենք, ինչ որ Աստուածն Համեղի են:

V. Պատուեալ զհայր քո և զմայր: | Պատուիր քո հօրն ու մօրը:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք չանարգենք ու չը վշտացնենք մեր ճնորդներին ու մեծերին, այլ պատուենք, սիրենք և օգնենք նրանց:

VI. Մի՛ սպանաներ: | Սպանութիւն մի՛ աներ:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք մեր մերձաւորին չը նախանձենք, չատենք, չը սպանենք և ոչ մի ցաւ չը պատճառենք նրա մարմնին. այլ օգնենք նրան և թեթեւացնենք նրա մարմնաւոր տանջանքները:

VII. Մի՛ շնար: | Ծնութիւն մի՛ աներ:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք մեր խօսքի ու գործի մէջ մաքուր լինինք և անկարգ կեանքով չապրենք:

VIII. Մի՛ գողանար: | Գողութիւն մի՛ աներ:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք մեր մերձաւորի փողը կամ կայքը չը խլենք ու մեզ չը սեպհականացնենք. այլ օգնենք նրան մեր ունեցածով:

IX. Մի՛ սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումնէ: | Քո մերձաւորի մասին սուտ վկայութիւն մի՛ տար:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք մեր մերձաւորին չը բամբասենք, ու նրա մասին վատ-վատ բաներ չը խօսենք. այլ պաշտպանենք նրան և նրա մասին լաւ խօսենք:

X. Մի՛ ցանկանար տանընկերի քո, և մի՛ ամենայնի, զինչ ընկերի քո իցէ: | Մի՛ ցանկանար քո մերձաւորի տանը, և այն ամեն բանին, ինչ որ քո մերձաւորինն է:

Այս պատուիրանով Աստուած Հրամայում է, որ մենք մեր մերձաւորի ունեցածի վրայ աչք չը անկենք. խորամանկութեամբ չաշխատենք խլել նրա ձեռքից նրա տունը կամ ժառանգութիւնը. այլ միշտ պատրաստ լինենք նրան օգտակար լինելու և նրա ունեցածը պահպանելու:

2. ՀԱՄԱՏԻ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Հաւատամք ի մի Աստուած ի Հայրն Ամենակալ յԱրարին երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ չօրէ Միածին, այսինքն յեութենէ չօր:

Աստուած յԱստուծոյ, յոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ չօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ, կատարելապէս ի Մարիամայ Արբոյ Կուսէն չօղուով սրբով: Որով էառ մարմին,

Հաւատում ենք մի Աստուծուն, ամենակարող չօրր, որ Ստեղծողն է երկնքի և երկրի՝ երևելիների և աներևոյթների:

(Հաւատում ենք) և մի Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստուծու Որդուն, որ ծնուած է Հայր Աստուծուց, այսինքն չօր էութիւնից՝ Միածին:

Աստուած է Աստուծուց, յոյս՝ յոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստուծուց ծնուած է և ոչ թէ ստեղծուած: Նա ինքը չօր Աստուծու բնութիւնից է, որով ամեն ինչ եղաւ երկնքում և երկրիս վրայ՝ երևելիները և աներևոյթները:

Նա մեր՝ մարդկանց փրկութեան Համար իջաւ երկնքից, մարմին առաւ, մարդ դարձաւ և ծնուեց կատարեալ կերպով Սուրբ Կոյս Մարիամից՝ Սուրբ չօղուով: Որով առաւ մարմին, չօղի,

չօղի և միտք և զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Չարհարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնով՝ նստաւ ընդ աշմէ չօր:

Գալոց է նովին մարմնով և փառօք չօր ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ո՛չ զոյ վտխձան:

Հաւատամք և ի Սուրբ չօղին՝ յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ի սուրբան:

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաքելական եկեղեցի. ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դա-

միտք և այն ամենն, ինչ որ կայ մարդու մէջ, ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով:

Չարհարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ. նոյն մարմնով երկնք Համբարձաւ և նստեց չօր աշ կողմի:

Գալու է նոյն մարմնով և չօր փառքով՝ դատելու կենդանիներին ու մեռածներին և Նրա թագաւորութիւնը վերջ չունի:

Հաւատում ենք նաև Սուրբ չօղուն՝ որ է ինքնազոյ և կատարեալ, որ խօսեց օրէնքների, մարգարէների և աւետարանների միջոցով. որ իջաւ Յորդանան գետը, քարոզեց Աստուծու ռդարկուածի մասին և բնակուեց սուրբերի մէջ:

Հաւատում ենք նաև մի ընդհանրական և առաքելական եկեղեցուն. մի մկրտութեան, ապաշխարութեան, մեղքի քաւութեան և թողութեան, մեռելների յարութեան, չօղիների և

տաստանն յաւիտենից հոգ-
ւոց և մարմնոց, յարքայու-
թիւնն երկնից և ի կեանն
յաւիտենականս:

մարմինների վերջին դա-
տաստանին, երկնքի ար-
քայութեանը և յաւիտե-
նական կեանքին:



ԵՐՐՈՐԿ ՄԱՍ

1. ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄԻ ԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԸՆԾԱՅՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Հրէաստանում մի քաղաք կար, անունը Նազարէթ:
Այդտեղ ապրում էր մի բարեպաշտ մարդ իւր կնոջ հետ:
Մարդու անունը Յովակիմ էր, կնոջը՝ Աննա: Նրանք
զաւակ չունէին, դրա համար էլ շատ տխուր էին: Ամեն
օր աղօթում էին, որ Աստուած իրանց մի զաւակ տայ:

Մի անգամ էլ, աղօթքի ժամանակ, նրանք ուխտե-
ցին Աստծուն ու ասացին. «Տէր Աստուած, եթէ Գու-
մեզ մի զաւակ տաս, մենք նրան տաճարին կ'ընծայենք»:
Աստուած լսեց նրանց աղօթքը և նրանց մի աղջիկ
տուեց: Այդ աղջկան նրանք անուանեցին Մարիամ:

Երբ Մարիամը երեք տարեկան դարձաւ, ծնողները,
ինչպէս որ ուխտել էին, տարան նրան Երուսաղէմ՝ քա-
ղաքը՝ տաճարին ընծայելու: Քահանայապետը Մարիա-

մին ընդունեց, տարաւ տաճարի ներսը և այնտեղ օրհ-
նեց նրան: Ծնողները թողին այգաւոյ Մարիամին և



իրանք տուն վերադարձան: Մարիամը դանում էր քա-
հանաների խնամքի տակ: Նա պարապում էր աղօթքով,
սուրբ Գիրքը կարդալով և ձեռագործով:

Սուրբ Այս Մարիամի ծնունդը տօնում ենք Ապրտեմ-
բերի 8-ին, իսկ Ընծայումը տաճարին՝ Այդեմբերի 21-ին:

2. Ա. Ի. Ե ՏՈՒՄԸ

Մի անգամ, երբ Մարիամը աղօթում էր, Գաբրիէլ
հրեշտակը երևաց նրան և ասաց. «Ողջո՛յն քեզ,
շնորհալի, Տէրը քեզ հետ»: Մարիամը վախեցաւ ու մտա-
ծում էր թէ ի՞նչ բանի համար է այս ողջոյնը: Իսկ հրեշ-
տակն ասաց. «Մի վախենար, Մարիամ, դու Աստծուն

սիրելի ես. մի որդի կը ծնես, անունը կը դնես Յիսուս, նա մեծ կը լինի և Սասածու Որդի կը կոչուի»:

Մարիամն ասաց. «Ես Տիրոջ աղախինն եմ, թող լինի ինձ, ինչպէս որ ասացիր»: Եւ հրեշտակը հեռացաւ նրանից:



Յեազ Տիրոջ հրեշտակը երազում երևաց Յովսէփին և ասաց. «Յովսէփ, մի փախենար, քո նշանած Մարիամը Որդի կը ծնի, նրա անունը կը դնես Յիսուս (Փրկիչ), որովհետեւ նա կը փրկէ ժողովրդին իրանց մեղքերից»:

Այն ժամանակ Յովսէփը Մարիամին իւր մօտ ընդունեց և նրա վրայ խնամք էր տանում:

Հրեշտակի աւետումը Մարիամին տօնում ենք Ապրիլի 7-ին:

3. ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԵՂՈՒՆԻ



Յիսուսի ծնունդը ժամանակը մօտեցրէր: Սրերում Օգոստոս կայսրը հրամայեց իւր թագաւորութեան մէջ մարդահամար անել: Եւ ամենքը զնում էին ցուցակի մէջ գրուելու՝ իւրաքանչիւրը իւր հայրենի քաղաքը: Յովսէփն ու Մարիամը Բեթղեհէմից էին, զրա համար էլ նազարէթից զնացին Բեթղեհէմ:



Երբ նրանք այնտեղ հասան, Մարիամը ծնաւ իւր անդրանիկ Որդին, խանձարուրի մէջ փաթաթեց նրան և զրեց մօտըր, որովհետեւ իջեանում նրանց համար տեղ չը կար:

Այնտեղ գաշտումը հովիւներ կային, որոնք զիշերը պահպանում էին իրանց հօտերը: Յանկարծ Տիրոջ հրեշտակը երևաց նրանց և ասաց. «Մի փախենաք, ես ձեզ

մեծ ուրախութիւն եմ աւետում:—այսօր Բեթղէհէմում ձեզ համար Փրկիչ ծնուեց: Ահա ձեզ նշան. — դուք կը դանէք մի Մանուկ խանձարուրում փաթաթած և մնուրի մէջ դրած»:

Այն ժամանակ հովիւները շտապով եկան Բեթղէհէմ և զաան Յովսէփին ու Մարիամին, իսկ Մանուկին՝ խանձարուրում փաթաթած և մնուրի մէջ դրած: Նրանք երկրպագեցին Նրան և ուրախ սրտով յետ դարձան:

Յիսուս Քրիստոսի ծնունդը տօնում ենք Յունուարի 6-ին:


4. ՅԻՍՈՒՍԻՆ ՏԱՃԱՐ ՏԱՆԵԼԸ

Երբ Յիսուս քառասուն օրական դարձաւ, Յովսէփին ու Մարիամը, օրէնքի համաձայն, տարան Նրան տաճարը: Նրանք հետները վերցրել էին մի զոյգ աղաւնի՝ այնտեղ զոհ բերելու համար:

Այդ ժամանակ Երուսաղէմում կար մի ծերունի՝ Սիմէօն անունով: Նա արդար էր և աստուածաբախ: Սուրբ Հոգին նրան յայանել էր, որ նա չի մեռնիլ, մինչև որ Քրիստոսին չը տեսնէ: Եւ նա Սուրբ Հոգու յայանութեամբ եկաւ տաճարը:

Այդտեղ ծերունի Սիմէօնը առաւ Յիսուսին իւր զիւրկը, փառք տուեց Աստծուն և ասաց. «Տէր, այժմ թող մեռնեմ, որովհետեւ իմ աչքերը տեսան Քո ուղարկած Փրկիչին»: Յովսէփին ու Մարիամը դարմանել էին այս խօսքերի վրայ:

Տաճարում կար նոյնպէս մի բարեպաշտ այրի՝ Աննա անունով, որ 84 տարեկան էր: Սա էլ մօտեցաւ, փառք




տուեց Աստծուն և ասում էր ամենքին թէ այս Մանուկը խոստացուած Փրկիչն է:

Այս տօնը, որ կոչուում է Տեսանընդառաջ, կատարում ենք Փետրվարի 14-ին:

5. ՅԻՍՈՒՍԻ ՄԿԻՏՈՒԹԻՒՆԸ

Յորդանան գետի կողմերում ապրում էր մի մարդարէ՛ Յովհաննէս անուշտոյ: Նա Աստծու հրամանով քա-



րողում էր ժողովրդին ու ասում. «Թողէ՛ք ձեր մեղքերը և բարի գործեր կատարեցէ՛ք»: ժողովուրդը հարցնում

էր. «Ի՞նչ անենք»: Յովհաննէսը ասում էր. «Ով ձեզանից երկու հանդերձ ունի, մէկը չունեցողին տայ, ով շատ կերակուր ունի՝ թող նոյնպէս անի. ո՛չ ոքից բան մի՛ խլէք»: Շատ մարդիկ թողնում էին իրանց մեղքերը և խոտանում էին ուղղուել: Սյդպիսի մարդկանց Յովհաննէսը մկրտում էր Յորդանան գետում:

Սյն ժամանակ Յիսուսն էլ Նազարէթից եկաւ Յովհաննէսի մօտ մկրտուելու: Նա արդէն երեսուն տարեկան էր: Յովհաննէսը չէր թողնում Նրան ու ասում. «Ես պէտք է Գեղանից մկրտուեմ, Դո՞ւ ես ինձ մօտ դալիս»: Յիսուս ասաց. «Թո՛ղ տուր այժմ, որովհետեւ այսպէս է Աստծու կամքը»: Եւ Յովհաննէսը մկրտուեց Յիսուսին:


Երբ Յիսուս ջրիցը դուրս եկաւ, երկինքը բացուեց: Յովհաննէսը տեսաւ, որ Աստծու Հոգին աղանու կերպարանքով իջնում էր և դալիս Նրա վրայ: Երկնքից էլ մի ձայն ասում էր. «Դա է Իմ սիրելի Որդին, որին ես հաւանել եմ»:

Յիսուսի մկտութիւնը ծննդեան հետ միասեղ տօնում ենք Յունուարի 6-ին:

6. ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՅՈՒ ԱՌԱՎԸ

Յիսուսը մի օրէնսգէտ մարդու այս առակը ասաց. «Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երիքով: Ճանապարհին նրա վրայ աւազակներ յարձակուեցին, կողոպտեցին նրան, վիրաւորեցին և կիսամեռ թողին գնացին: Պատահեց որ այն ճանապարհով անցնում էր մի քահանայ: Նա թէև տեսաւ այն անբաղդին, բայց անց-

կացաւ զնաց: Նոյն ճանապարհով անցաւ մի զևտացի. նա էլ այնպէս արաւ: Յետոյ անցաւ մի Սամարացի: Սա հէնց որ տեսաւ վիրաւորուածին՝ խղճաց. իսկոյն մօտեցաւ, փաթաթեց վերքերը՝ վրան ձէթ ու զինի ածեց, իւր աւանակի վրայ նստեցրեց, տարաւ մի պանդոկ ու խնամեց նրան:



Հետեւեալ օրը, երբ զուրս պիտի զնար այն տեղից, տուեց պանդոկապետին երկու դահէկան և ասաց. «Խնամիր զրան, և եթէ աւելի ծախսես, վերադարձիս կը վճարեմ»:

Յիսուս, երբ առակը վերջացրեց, ասաց այն օրէնս՝ զէտին. «Գնա՛, զու էլ Սամարացու պէս վարուիր»:

Ինչ որ ասաց Յիսուս օրէնագէտին, նոյնը վերաբերում է և մեզ:

Երբ տեսնում ենք մի մարդու նեղութեան մէջ, չը պէտք է տեղեկանանք հայց է արդեօք նա, թէ մի ուրիշ ազգից. մեր ազգակիցն է՝ թէ օտար. բարեկամ է մեզ՝ թէ թշնամի: Ո՛վ էլ որ լինի, եթէ նա նեղութեան մէջ է և օգնութեան է կարօտ, պէտք է ընդունենք նրան ինչպէս մեր մերձաւորը ու եղբայրը և օգնենք նրան:

7. Ծ Ա. Ղ. Կ Ա. Զ Ա. Ր Գ

Չատիկ տօնից վեց օր առաջ Յիսուս ճանապարհ ընկաւ դէպի Երուսաղէմ: Նրա յետեւից գնում էր ժողովրդի մեծ բազմութիւն: Երբ մօտեցաւ Զիթենեաց լեռան, պատուիրեց իւր աշակերաններին, որ մի աւանակ բերեն: Նրանք բերին աւանակը, ձգեցին նրա վրայ իրանց շորերը և Յիսուսին նստեցրին:



Յիսուսի զնարու ժամանակ ժողովրդից շատերը փռում էին իրանց շորերը ճանապարհի վրայ: Ուրիշներն

էլ արմաւենի և ձիթենի ծառերից ծիւղեր էին կտրում ու ճանապարհին փռում: Իսկ նրա առջևից ու յետևից դնացողները աղաղակում էին. «Ո՛ր փաննա, օրհնուած է Տիրոջ անունով եկողը»:

Երբ Յիսուս Երուսաղէմ մտաւ, դուրս եկաւ նրա առաջ մեծ բազմութիւն և ամենքը հարցնում էին. «Ո՞ր է սա»: Յիսուսի հետ եկող ժողովուրդը պատասխանում էր. «Սա Յիսուսն է, նազարէթի մարգարէն»:

Ըստ սօնը կատարում ենք մեծ պատի վեցերորդ կիրակին:

8. ԶՍՏԿԱԿԱՆ ԸՆԹՐԻՔ ԵՒ ՈՏՆԱԼՈՒՍՅ

Սւազ հինգշաբթի օրը աշակերտները մօտեցան Յիսուսին և ասացին. «Ո՞րտեղ ես կամենում, որ Քեզ հա-



մար դատկական ընթրիքը պատրաստենք»: Նա ասաց— «Երբ քաղաք կը մանէք, այնտեղ մի մարդ ցոյց կտայ ձեզ մի մեծ դարդարուած վերնատուն, այնտեղ պատրաստեցէք»: Աշակերտները գնացին և ընթրիքը պատրաստեցին: Երեկոյեան նա աշակերտների հետ սեղան նստեց և ասաց. «Սրտով ցանկացայ, որ Իմ չարչարուելոց առաջ այս ընթրիքը ձեզ հետ ուտեմ»: Այս ասելով, նա վերկացաւ սեղանից, հանեց վերարկուն, մէջքին դէնչակ կապեց, կոնքի (լագանի) մէջ ջուր ածեց և սկսեց աշակերտների ոտքերը լուանայ և դէնչակով սրբել:

Յետոյ նա նորից սեղան նստեց և ասաց. «Եթէ ես, Ձեր Տէրը և Վարդապետը, ձեր ոտքերը լուայի, ուրեքն զուք էլ պէտք է իրար ոտքերը լուանաք. որովհետեւ ես ձեզ օրինակ տուի, որ ինչպէս ես ձեզ արի, այնպէս էլ զուք իրար անէք»:


Ըստ հինգշաբթի երեկոյեան եկեղեցում կատարում է ոտնալուայի կարգը, որ յիշեցնում է մեզ Նրա խոնարհութիւնը և մեծ սէրը:

9. ՍՈՒՐԲ ՀՍԱԼՈՐԴՈՒԹԻՒՆ

Ոտնալուայից յետոյ, երբ նորից սեղան նստեցին, Յիսուս ախուր ձայնով ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ձեզանից մի նր մասնելու է Ինձ»: Աշակերտները զարմացած իրար երեսին էին նայում և ամեն մինը սկսեց հարցնել. «Տէր, մի՞թէ ես եմ»: Յիսուս պատասխանեց. «Ում որ մի պատառ հայ կը թաթախեմ կը տամ, նա է»: Եւ պատառ թաթախելով տուեց Յուդային և ասաց. «Ինչ որ անելու ես, շուտով

արա՛)։ Յուզան պատառը վերցրեց և դուրս գնաց. արդէն դիշեր էր։

Երբ Յուզան դուրս գնաց, Յիսուս ասաց. «Որդիք, նոր պատուիրան եմ տալիս ձեզ.—ինչպէս որ ես ձեզ սիրեցի, այնպէս էլ դուք պիտի իրար սիրէք — սրանով ձեզ կը ձանաչեն, որ դուք իմ աշակերտներն էք»։



Սրանից յետոյ Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց և տուեց աշակերտներին ու ասաց. «Սու՛քք, կերէ՛ք» այս է իմ մարմինը. այս կատարեցէք իմ յիշատակի համար»։ Յետոյ առաւ բաժակը, շնորհակարութիւն արաւ Աստուծոն, տուեց նրանց ու ասաց. «Խմեցէ՛ք դրանից ամենքդ, այս է իմ արիւնը. ամեն անգամ, երբ այս բաժակիցը խմէք, ինձ յիշեցէք»։ Այսպէս աւագ Հինդարթի օրը Յիսուս սահմանեց Սուրբ Հաղորդութիւնը։

10. ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻ ՊԱՐՏԻՉՈՒՄ

Չափական ընթրիքից յետոյ Յիսուս աշակերտների հետ բարձրացաւ Չիթենեայ լեռոր։ Լեռան վրայ մի պարտեզ կար՝ Գեթսեմանի անունով։ Նա գնաց այնտեղ և ասաց աշակերտներին. «Այստեղ մնացէք և ինձ հետ արթուն կացէք»։ Իսկ ինքը մի քիչ նրանցից հեռացաւ, ընկաւ երեսի վրայ և այսպէս աղօթեց. «Տայր Իմ, եթէ կարելի է, հեռացրո՛ւ ինձանից այս բաժակը (չարչարանքը), բայց ո՛չ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս Դու»։



Աղօթքից վերադարձաւ և տեսաւ, որ նրանք քնել են, — ասաց. «Արթո՛ւն կացէք և աղօթք արէք, որ փորձանքի մէջ չընկնէք»։ Յետոյ գնաց և դարձեալ աղօթեց։ Վերադարձաւ և տեսաւ, որ նրանք էլի քնել են։ Նա թողեց նրանց և գնաց աղօթեց երրորդ անգամ։

Աղօթելուց յետոյ Նա եկաւ աշակերաների մօտ և ասաց. «Աէր կայէք, ահա մօտենում է մատնիչը»: Երբ Նա դեռ խօսում էր, Յուդան զինուորների հետ՝ սրերով ու յապաւերներով, մտաւ սարակէջ: Զինուորները յարձակուեցին Յիսուսի վրայ, բռնեցին Նրան և կապեցին: Իսկ աշակերանները թողին և փախան:


11. ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԿՆԵՐԻ ԹՈՂԻՐՈՒԹԻՒՆԸ

Երբ որ առաւօտ եղաւ, Յիսուսին տարան Պանտաջի Պիղատոսի մօտ, որ երկրի գատաւորն էր: Պիղատոսը հարցրեց. Ի՞նչ է Իրա յանցանքը»: Նրանք սկսեցին Յիսուսին մեղադրել ու ասել. «Նա Իւր քարոզներով մտրեցնում է ժողովրդին, արդելում է Կայսրին հարկ տալ և Իրան թագաւոր է անուանում»: Պիղատոսը քննեց Յիսուսին և տեսնելով, որ բոլորը սուտ է, կամենում էր արձակել: Բայց հրեաները աղաղակում էին. «Խաչիր, խաչիր Իրան. իսկ եթէ արձակես, մենք Կայսրին զանգատ կանենք»: Այն ժամանակ Պիղատոսը վախեցաւ ժողովրդից և Յիսուսին նրանց ձեռքը տուեց, որ խաչուի:

Առաւօտուց Զ ժամին զինուորները տարան Յիսուսին Գողգոթա և այնտեղ խաչեցին: Նրա հետ երկու աւաղակ էլ խաչեցին, մէկին Յիսուսի աջ կողմը, միւսին՝ ձախ: Ամենքը ծաղրում էին Յիսուսին, բայց Նա աղօթում էր նրանց մեղքերի համար ու ասում. «Ճայր, ներիր զրանց, որովհետև չը գիտեն թէ ինչ են անում»:

Կէսօրից սկսած խաւար սգաւեց երկիրը մինչև երբորդ ժամը: Այդ ժամանակ Յիսուս ասաց. «Մարաւ եմ»: Զինուորներից մինը թաթախեց սարունդր քաղցախի մէջ և եղեգի ծայրին զրած, տուեց Նրան խմելու: Երբ Յիսուս


քաղցախ ճաշակեց, բարձր ձայնով աղաղաղեց. «Ճայր, հոգիս Գո ձեռն եմ աւանդում»: Այս որ ասաց, խոնարհեցրեց գլուխը և հոգին աւանդեց:



Այդ ժամանակ երկիրը շարժուեց և ժայռերը պատատուեցան: Երբ հարիւրապետը ու զինուորները այդ տեսան, սաստիկ վախեցան և ասացին. «Ճշմարիտ որ Սա սրղար էր և Աստծու Որդի էր»:

12. ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Ուրբաթ, երեք ժամին Յիսուս մեռաւ: Երեկոյեան
եկաւ Յիսուսի ծածուկ աշակերտ Յովսէփը: Սա գնաց



Պիղատոսի մօտ և խնդրեց, որ թոյլ տայ իրան Յիսուսի
մարմինը խաչից իջնելու և թաղելու: Պիղատոսը թոյլ

տուեց: Եկաւ նոյնպէս Յիսուսի միւս աշակերտ Նիկողի-
մանը, որ բերել էր հետը անուշահոտ խղեր: Սրանք միա-
սին իջեցրին խաչից Յիսուսի մարմինը, օծեցին անուշահոտ
խղերով և պատեցին մաքուր կտաններով:

Այնտեղ, ուր Յիսուսին խաչեցին, մի պարտեղ կար,
պարտիզումն էլ մի նոր գերեզման: Ահա այդտեղ զրին
Յիսուսի մարմինը, մի մեծ քար էլ զլորեցին գերեզմանի
դրանը և գնացին: Այնտեղ էին Մարիամ Մաղդաղէնացին,
միւս Մարիամը և Սոդոմէն:


Հետեւեալ օրը հրեաները Պիղատոսից պահապան զին-
ւորներ խնդրեցին և տարան կանգնեցրին նրանց Յիսուսի
գերեզմանի մօտ:

13. ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի առաւօտեան լոյսը ծագելիս մեծ երկրաշարժ
եղաւ: Այդ ժամանակ Յիսուսը՝ կենդանի և լուսափայլ,
յարութիւն առաւ գերեզմանից: Իսկոյն Տիրոջ հրեշտակը
երկնքից իջաւ, գերեզմանի դրան քարը հեռու զլորեց և
նստաւ նրա վրայ: Հրեշտակի երեսը փայլակի էր նման և
չորերը՝ ձիւնի պէս սպիտակ: Նրա երկիւղից պահապան-
ները տարտափեցան և մեռելի պէս եղան:

Այդ օրը, առաւօտը փաղ, Մարիամ Մաղդաղէնացին,
միւս Մարիամը և Սոդոմէն եկան Յիսուսի գերեզմանը, որ
օձէն նրա մարմինը: Նրանք ճանապարհին ասում էին
միմեանց. «Ո՛վ կը զլորէ մեզ համար գերեզմանի դրան
քարը»: Իսկ երբ մօտեցան, աեսան որ քարը զլորած էր:
Մարիամ Մաղդաղէնացին վազեց աշակերտների մօտ, որ
յայտնէ այդ մասին:

Միւս երկու կանայքը մտան դերեզմանը և տեսան այնտեղ նստած մի հրեշտակ՝ փայլուն շորերով, և խիստ փախեցան: Հրեշտակն ասաց. «Մի՛ փախենաք, դուք խաչուած Յիսուսի՛ն էք որոնում. նա այստեղ է, յարութիւնն առաւ: Գնացէք և ասացէք այդ Նրա աշակերտներին»:



Այն ժամանակ նրանք շտապ և ուրախ սրտով վազեցին յայտնելու աշակերտներին:

14. ՅԻՍՈՒՍԻ ՀՄԲԱՐՁՈՒՄԸ

Յիսուս յարութիւնից յետոյ քառասուն օր մնաց երկրիս վրայ: Նա շատ անգամ երևում էր աշակերտներին և խօսում հեռները նրանց ապագայ քարոզութեան մասին: Քառասներորդ օրը նա վերջին անգամ երևաց նրանց և ասաց. «Երուսաղէմից մի՛ հեռանաք, այլ սպասեցէք Սուրբ Հոգու գալստեանը: Նա ձեզ զօրութիւն կտայ և դուք իմ մտան կը քարոզէք Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում և բոլոր միւս երկրներում»:



Սրանից յետոյ տարաւ նրանց Զիթենեաց լեռոր և ասաց. «Տուած է Ինձ ամեն իշխանութիւն երկնքում և երկրիս վրայ: Ուրեմն գնացէք, քարոզեցէք բոլոր ժողովրդներին, մկրտեցէք նրանց Հօր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Սովորեցրէք նրանց այն ամենը, ինչ որ ես պատ-

ւիրել եւմ Ձեզ: Եւ ահա ես ձեզ հետ եւմ ամեն օր, մինչև աշխարհի վերջը»:

Այս ասելով Նա բարձրացրեց ձեռքերը և օրհնեց նրանց: Օրհնելու ժամանակ Նա նրանց աչքերի առաջ երկինք համբարձաւ: Աշակերտները երկրպագեցին Նրան և վերադարձան Երուսաղէմ:

Համբարձման տօնը կատարում ենք Օգոստից քառասուն օր յետոյ:


15. ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Աշակերտները Ձիթենեաց սարից վերադարձան Երուսաղէմ և գնացին իրանց բնակած վերնատունը: Այդտեղ նրանք, Յիսուսի մօր՝ Մարիամի հետ միատեղ, տասն օր շարունակ աղօթքով էին անցկացնում:


Տամներորդ օրը հրէաների Պենտեկոստէի տօնն էր: Ամենքը վերնատան մէջ էին: Յանկարծ երկնքից մի ձայն լսուեց, որ նման էր սաստիկ փչող քամու, և ամբողջ տունը լցրեց: Երևացին նրանց կրակի նման լեզուներ, որ մի-մի նստեցին իւրաքանչիւրի վրայ: Նրանք ամենքը Սուրբ Հոգւով լցուեցան և սկսեցին խօսել զանազան լեզուներով:

Տօնի պատճառով զանուում էին Երուսաղէմում շատ հրէաներ՝ ուրիշ երկիրներից եկած: Երբ երկնքից իջնող ձայնը լսուեց, ժողովուրդը հաւաքուեց վերնատան մօտ և լսում էին առաքեալների խօսակցութիւնը ուրիշ լեզուներով: Ամենքը զարմացած ասում էին. «Ձէ՞ որ այդ խօսողները Գալիլեացիներ են, ապա ի՞նչպէս են խօսում մեր լեզուներով. այդ ի՞նչ բան է»:

Այն ժամանակ Պետրոս առաքեալը վերկացաւ և այսպէս խօսեց. «Ո՞վ հրէաստանցիներ, լաւ լսեցէք. — այն Յիսուսին, որին Աստուած հրաշքներով աշխարհ ուղարկեց, դուք խաչին մեխեցիք և սպանեցիք, իսկ Աստուած Նրան փառաւոր կերպով յարութիւն տուեց: Այժմ Նա երկինք համբանալով՝ թափեց մեզ վրայ Սուրբ Հոգին, ինչպէս դուք ինքներդ էլ տեսնում և լսում էք»:



Այս քարոզից յետոյ շատերը զղջացին իրանց մեղքերը և հաւատացին Քրիստոսին: Այդ օրը մկրտուեց երեք հարիւր Հոգի:

Այսպէս Հոգեգալստեան օրը հաստատուեց  + քիսպոնէական եկեղեցին:

Հոգեգալստեան տօնը կատարում ենք Համբարձումից տասն օր յետոյ:



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

1.

Այն երկիրը, որտեղ ապրում էին Հրէաները, կոչուում էր Հրէաստան: Այնտեղ կային շատ քաղաքներ ու գիւղեր: Գլխաւոր քաղաքը կամ մայրաքաղաքը կոչուում էր Երուսաղէմ: Հրէաները մեզ նման ամեն քաղաքում եկեղեցի կամ տաճար չունէին: Նրանք ունէին միայն մի տաճար և այդ գտնուում էր Երուսաղէմում: Տաճարումը կային շատ քահանաներ, նրանց ամենամեծը կոչուում էր քահանայապետ:

Տաճարի շուրջը կային շատ բնակարաններ: Այդ բնակարաններում ապրում էին տաճարին ընծայուած բարեպաշտ կոյսեր և պրիւներ: Նրանք ծառայում էին Ասածուն և պարապում էին աղօթքով, սուրբ Գիրքը կարդալով և ձեռագործով: Հրէաստանի քաղաքներից մէկի անունը Նազարէթ էր: Ահա այդ քաղաքում պատահեց մի անցք, որի մասին կամենում եմ ձեզ պատմել:

2.

Այսօր ես ձեզ պէտք է ծանօթացնեմ Հրէից ժողովրդի հետ: Աստուած այդ ժողովրդին շատ էր սիրում: Նա յորքան բարիքներ է արել նրանց և քանի քանի անգամ նեղութիւնից ազատել է: Բայց նրանք մոռանալով Աստուծու բարերարութիւնը, իրանց անօրէն կեանքով շարունակ մեղք էին անում և Ասածուն վշտացնում: Աստուած շատ

անգամ նրանց զգուշացրեց, նա նրանց օրէնքներ տուեց — Տաար պատուիրանը — որը նրանք պարտաւոր էին պահել: Սակայն ամեն ինչ զուր անցաւ և հրէաները շարունակ մեղք էին անում:

Սյն ժամանակ Աստուած թող տուեց, որ հրէաները բնկնեն մի ուրիշ ժողովրդի իշխանութեան տակ: Սյդ ժողովուրդը հռօմայեցիներն էին: Սրանք եկան հրէաներին յաղթեցին և նրանց երկրի տէրը դարձան: Հռօմայեցիները մի մեծ թագաւոր — կայսր ունէին՝ Օգոստոս անունով: Նա այն ժամանակուայ բոլոր թագաւորներից ամենազորաւորն էր: Հրէաներն էլ ունէին թագաւոր, բայց նրանց թագաւորը ազատ թագաւոր չէր — նա հպատակ էր հռօմայեցիների Օգոստոս կայսրին: Օգոստոս կայսրը Երուսաղէմում չէր ապրում, այլ իւր տեղ ուղարկում էր կառավարիչներ: Սրանք խիստ նեղացնում էին հրէաներին: Հրէաները համբերութեամբ տանում էին այդ նեղութիւնները, որովհետև յոյս ունէին, որ Աստուած իրանց համար մի Փրկիչ կուղարկէ, որը կազատէ իրանց մեղքերից և Աստծու Հետ կը հաշտեցնէ:

Բայց ճրտեղից զիսէին հրէաները, որ Աստուած Փրկիչ է ուղարկելու — կը հարցնէր զուր: Սյդ մասին Աստուած յայտնել էր ժողովրդին ուսուցիչների միջոցով: Սյդ բարեպաշտ քարոզիչ-ուսուցիչները կոչուում էին ճարհաբէնէր: Ժողովրդի նեղութեան ժամանակ մարգարէները մխիթարում էին նրանց ու ասում. «Յոյսերդ մի՛ կտրէք, կը գայ Փրկիչը. նա մեծ կը լինի, Աստծու Որդի կը կոչուի, կը ծնուի Բեթղեհէմ քաղաքում և նրա մայրը կոյս կը լինի»: Սյդպէս է գրուած սուրբ Գրքում: Հրէաները այդ կարգացել էին և ամենքը հաւատով սպասում էին Փրկչի գալուտեանը:

Մի աղքատ, բայց բարեպաշտ կոյս, նոյնպէս սպասում էր Փրկչի գալուտեանը: Իսկ ձեր իմացած Մարիամ կոյսն էր: Նրա ծնողները արդէն մեռել էին և նա 14 տարեկան էր: Որովհետև նա բարեպաշտ էր, զրա համար էլ սիրելի էր Աստծուն: Քահանաները Մարիամին նշանել էին մի մարդու հետ, որի անունը Յովսէփ էր: Յովսէփը Հիւան էր և ապրում էր Նազարէթում: Սյժմ ձեզ կը պատմեմ Մարիամի և Յովսէփի մասին:

3.

Սյսօր ձեզ պէտք է պատմեմ Յիսուսի ծննդեան մասին: Բայց այդ պատմելուց առաջ զուր պիտի իմանաք ահա թէ ինչ: Թէև հրէաները, ինչպէս ձեզ արդէն ասել եմ, ունէին իրանց համար թագաւոր, բայց նրանց թագաւորը այն ժամանակ հպատակ էր մի ուրիշ՝ իրանից ակելի զօրաւոր թագաւորի: Սյդ թագաւորը հռօմայեցիների կայսր Օգոստոսն էր: Հրէաները իրանց ապրելու համար նրան փող էին վճարում — հարկ էին տալիս, և նրա բոլոր հրամանները պարտաւոր էին կատարել: Իսկ Յիսուսի ծնուելու ժամանակ Օգոստոս կայսրը ցանկացաւ իմանալ՝ թէ ո՞րքան ժողովուրդ կայ իւր ամբողջ թագաւորութեան մէջ — նա հրամայեց մարդահամար անել: Սյն ժամանակուայ օրէնքով ամեն մի մարդ պարտաւոր էր դնալ իւր հայրենի քաղաքը և այնտեղ ցուցակի մէջ գրուել:

Հրէաստանի ամեն մի քաղաքում՝ եկուր մարդկանց համար հիւրանոցներ — իշխաններ կային: Իսկ այն մարդիկ, որոնք աղքատութեան պատճառով իշխանում տեղ չէին գտնում, մնում էին քաղաքից զուրս գտնուող այրե-

րում: Նրէաստանում եղանակները ամառ-ձմեռ տաք էին լինում, դրա համար էլ հօտերը դիշեր ցերեկ բաց դաշտումն էին մնում: Իսկ փստ ու անձրեւային եղանակին հովիւները հօտերը քշում էին այդ այրերը: Ուրեմն այդ այրերը փարախի տեղ էլ էին ծառայում: Սյնտեղ միշտ կարելի էր դանել մնուր, խոտ և դարման: Հօտերի պահպան հովիւները միշտ նրանց հետ էին լինում: Այժմ լսեցէք պատմութիւնը:

4.

Հրէաների մէջ օրէնք էր, որ երբ մէկի անդրանիկ տղայ երեխան քառասուն օրական էր դառնում, պէտք է նրան տաճար տանէին՝ Աստծուն ներկայացնելու համար: Նոյնպէս պէտք է տաճարում ընծայ, զոհ բերէին: Հարուստները զոհ էին բերում մի գառը, իսկ աղքատները՝ մի զոյզ աղանի: Յովսէփն ու Մարիամը բարեպաշտ էին և բոլոր օրէնքները կատարում էին: Իրա համար էլ, երբ Յիսուս քառասուն օրական դարձաւ, նրանք շտապեցին կատարել և այդ օրէնքը:

5.

Յիսուս մեծանում էր հասակով և զարգանում իմաստութիւնով: Մինչև երեսուն տարեկան դառնալը Նա ապրում էր ժողովրդից հեռու և պատրաստուում էր իւր մեծ կոչումի՝ ժողովրդի փրկիչը լինելու համար: Յիսուս երեսուն տարեկան հասակում պիտի դուրս գար ժողովրդին քարոզելու: Արդեօք Նա Ի՞նքը ուղղակի դուրս կը-

գար ժողովրդի մէջ, թէ մէկը Նրա համար ճանապարհ բաց կանէր—ժողովրդին կը պատրաստէր Նրան ընդունելու:

Երբ մի թագաւոր կամենում է մի քաղաք գնար, իրանից առաջ ուղարկում է մէկին, որ իւր դալը յայտնէ — ժողովրդին պատրաստէ: Այդ յայտնողը նրա կարապետն է կոչւում: Այսպէս էլ եղաւ Յիսուսի հետ: Աստուած առաջադոյն ուղարկեց ժողովրդի մօտ Նրա կարապետին, որ իւր քարոզներով ժողովրդին պատրաստէ Յիսուսին ընդունելու:

Յիսուսի կարապետը մարգարէ*) Յովհաննէսն էր: Սա մի արդար և բարեպաշտ մարդ էր: Յորտրում էր ժողովրդին թողնել իրանց մեղքերը—մաքել իրանց մեղաւոր սիրտը: Իսկ ո՞վ որ իւր մեղքերը զոյշում էր, այդպիսիներին Յովհաննէսը Յորդանան գետում լողացնում—մկրտում էր: Այդ մկրտու թիւնը նշանակում էր — ինչպէս էր որ մաքրւում է կեղտից մեղաւորի մարմինը, այնպէս էլ պիտի մաքրուի մեղքից նրա սիրտը:

Այժմ մտքով դնանք Յորդանան գետի կողմերը: Այնտեղ էր մարգարէ Յովհաննէսը քարոզում ժողովրդին:

6.

Յիսուս մկրտութիւնից յետոյ ման էր գալիս հրէաստանի ամեն կողմերը, քարոզում էր ժողովրդին Աստծու խօսքը և բժշկում էր ամեն տեսակ հիւանդներ. — կոյրե-

*) Մարգարէի մասին դաղափար է տուած № 2 նախապատրաստութեան մէջ:

րին տեսողութիւն էր տալիս, խուլերին՝ լսողութիւն, կազերին ոտք էր տալիս, և մինչև անդամ, մեռելներին յարութիւն էր տալիս: Յիսուս այդ բժշկութիւնները կատարում էր առանց դեղերի — միայն ձեռքը դնում էր հիւանդի վրայ, կամ խօսքով հրամայում և իսկոյն հիւանդը առողջանում էր: Սյդպիսի բժշկութիւնը կոչւում էր հրաշք: Յիսուս հրաշքներ էր անում, որ մարդիկ հաւատան, թէ Ինքն է Աստուծոյ ուղարկուած Փրկիչը:

Յիսուս ուներ տասներկու աշակերտ, որոնք կոչւում էին առաքեալ: Դրանք միշտ Յիսուսի հետ էին լինում — լսում էին Նրա քարոզները և տեսնում Նրա արած հրաշքները: Շատ անգամ էլ Յիսուս կամենալով իւր միտքը աւելի պարզ հասկացնել, փոքրիկ պատմութիւններ էր պատմում: Սյդ պատմութիւնները առակ են կոչւում: Ահա այդ առակներից մինք այժմ կը սովորենք:

7.

Կիրակի օրերը բարեպաշտ քրիստոնեաները գնում են եկեղեցի աղօթելու: Սյդպէս է կամենում Տէր Աստուած: Նա ասում է Չորրորդ պատուիրանում. «Յիշեալ սրբել զօր շաբաթու»: Շաբաթը, որ մեր կիրակին է, հանդատութեան օր է — տօն է: Մենք ունինք նաև ուրիշ տօներ: Ի՞նչ մեծ տօներ դուք գիտէք: —

Ամեն տօնի մենք կարող ենք եկեղեցի գնալ, որովհետև նա մեզնիցը հեռու չէ: Իսկ Բեթղեհէմի և Նազարէթի հրէաները չէին կարող ամեն տօնի Աստուծու տունը գնալ: Ինչո՞ւ: — Հրէաներն էլ ունէին տօներ, նրանք էլ ունէին Չատիկ: Սյդ տօնին նրանք սովորաբար ուղևոր-

ւում էին Երուսաղէմ՝ Աստուծու տանը աղօթելու համար:

Չատիկի տօնը մօտենալու ժամանակ բոլոր փոքոցներում աչքի էր ընկնում ուխտաւորների բազմութիւն, որոնք գլմնում էին դէպի Երուսաղէմ: Ահա այսօրուայ պատմութիւնից դուք կը սովորէք՝ թէ ինչպէս Յիսուս հանդիսաւոր կերպով Երուսաղէմ ուղևորուեց:

8.

Աւագ Հինգշաբթի օրն էլ Յիսուս Երուսաղէմում էր: Սյդ օրուանից սկսում էր հրէաների Չատիկը: Նրանց օրէնքով այդ օրը ամեն մի ընտանիք պէտք է մի դառը մտնէր, խորովէր և բաղարջ-հաց թխէր, ու այդ խորոված դառը բաղարջ հացով երեկոյեան ուտէր: Սյդ ընթրիքը կոչւում էր զատկական ընթրիք: Յիսուս գիտէր, որ շուտով Ինքը պէտք է մասնուի և մեռնի: Ինչպէս որ միշտ նա կատարել էր օրէնքը, այս անգամ էլ նա ցանկացաւ կատարել այդ օրէնքը և վերջին անգամ աշակերտների հետ ուտել զատկական ընթրիքը:

9.

Յիսուս ուր որ գնում էր, ամեն տեղ բժշկում էր հիւանդներին, մխիթարում էր վշտացածներին, սովորեցնում էր և յորդորում բարի գործեր կատարելու:

Փողովուրդը այդ տեսնում ու լսում էր և հաւատում, որ նա է Փրկիչը: Նրանք սիրում ու պաշտում էին Յիսուսին աւելի, քան քահանայապետներին ու դպիր-

ներին: Այս պատճառով սրանք խիստ նախանձում էին Յիսուսին և մի պատճառ էին որոնում, որ կարողանան նրան մեղադրել և սպանել:

Սրան աւերացաւ մի ուրիշ բան է: Նրէաների մէջ ամենայայտնի ու պատուելի մարդիկը փարիսեցիներն էին: Նրանք մարդկանց առաջ շատ ջերմեռանդ էին ձևանում: Աղօթելու ժամանակ անկիւններում ու հրապարակներում էին կանգնում, որպէսզի շատ մարդ իրանց վրայ ուշադրութիւն դարձնէ: Երբ աղքատներին ողորմութիւն էին տալիս, հրամայում էին փող փէլի, որպէսզի շատերը իմանան այդ մասին: Բայց իսկապէս նրանք ամենէին ջերմեռանդ չէին, այլ հպարտ էին ու մեծամիտ: Նրանց սէրը թէ դէպի Աստուած և թէ դէպի մարդիկ իսկական չէր — կեղծ էր: Դրա համար էլ Տէր Յիսուս նրանց անուանում էր «կեղծաւորներ» և շատ անգամ նրանց նախատում էր ու յանդիմանում: Այս պատճառով էլ նրանք ատում էին Յիսուսին և մինչև անգամ սպանել էին կամենում:

Յիսուս թէև այդ զիտէր, բայց և այնպէս նա Զատիկի տօնին գնաց Երուսաղէմ, որտեղ ապրում էին նշանաւոր փարիսեցիները: Այնտեղ նա ամեն օր լինում էր սաճարում — սովորեցնում էր, քարոզում և բժշկում հիւանդներին: Փարիսեցիները շատ բարկանում էին այդ բանի վրայ: Նրանք ամենայն ուրախութեամբ կը հրամայէին Յիսուսին բռնել, մեղադրել և սպանել: Սակայն վախենում էին Յիսուսին ցերեկով բռնել, որ ժողովրդի մէջ խռովութիւն չընկնի: Այս պատճառով վճռեցին զիշերով բռնել նրան: Բայց չգիտէին թէ Տէրը որտեղ է անցկացնում զիշերը: Յիսուս զիշերները քաղաքում չէր քնում, այլ աշակերտների հետ գնում էր Ձիթենեաց լեռը, որ Երուսաղէմի

մօտ է, և այնտեղ անցկացնում: Այդ տեղը բացի աշակերտներից ոչ ոք չը զիտէր: Դուք ի հարկէ հաւատացած էք, որ աշակերտներից ոչ մէկը այդ տեղը չի յայտնի, բայց այդպէս չեղաւ: Աշակերտներից մէկը՝ Յուդան, շատ փողատէր էր և ազաս: Նա ծածուկ գնաց քահանայապետների մօտ և ասաց. «Ինձ ի՞նչ կըտաք, եթէ ես Յիսուսին մատնեմ»: Նրանք էլ ուրախացան և խոստացան փող երեսուն արծաթ: Այդ օրուանից Յուդան յարմար ժամանակ էր որոնում, որ Յիսուսին մատնէ:

10.

«Ձեզանից մինը մատնելու է Ինձ»: — Ի՛նչպիտի տխրութիւնով արտասանեց Յիսուս այս խօսքերը: Յիսուս սրբանոց ցաւում էր, որ իւր սիրելի աշակերտներից մէկը պիտի դառնար իւր մատնիչը: Այսօրուայ պատմութեան մէջ մենք տեսնք՝ թէ ի՛նչպէս Տէր Յիսուս աշխատում էր մենք կանգնեցնել Յուդային իւր չար մտքից: Նա բոլոր աշակերտների առաջ տուեց Յուդային թաթախած պաւտուր, որ նա իմանայ թէ Տէրը զիտէ նրա չար միտքը և զղուշանայ: Բայց փողի սէրը այնքան խոր արմատ էր ձգել նրա սրտում, որ նա ամենէին չամաչեց ու չը զղջաց. պատառը վերցրեց և գնաց Յիսուսի թշնամիների մօտ:

Յիսուս զիտէր, որ այդ զիշեր պէտք է մատնուի, պէտք է իրան չարչարեն և խաչեն: Սակայն նա դարձեալ գնաց Ձիթենեաց լեռը, որովհետև Աստուծո կամքը այնպէս էր, որ նա պէտք է մեռնէր ժողովրդի փրկութեան համար: Այդ զիշերը Յիսուսի ամենաճանր զիշերն էր — նրա վշտի ու նեղութեան զիշերը: Եւ նա իւր նեղութեան

ժամանակը աղօթքով անցկացրեց—Նա աղօթք արաւ և սրանով մեզ համար օրինակ թողեց, որ մենք էլ մեր վրէժի ու նեղութեան ժամանակ աղօթք անենք:

11.

Չարագործներին ու մարդասպաններին մահի պատիժ են նշանակում: Այդ անում է իշխանութիւնը: Բացի իշխանութիւնից ոչ ոք իրաւունք չունի զրկելու մէկին իւր կեանքից: Նրէաստանում էլ նոյնն էր. միայն կայսրը իրաւունք ունէր մէկին մահով պատժելու: Նրէաներն իրանք այդ անելու իրաւունք չունէին: Դուք արդէն լսեցիք ճշմայեցիների զօրաւոր կայսրի մասին՝ Յիսուսի ծննդեան պատմութիւնը անելիս: Կայսրը ինքը Նրէաստանում չէր սպրտում, այլ ուղարկում էր այնտեղ իւր մարդկանցից մէկին: Այդ մարդը լինում էր երկրի դատաւորը: Յիսուսի ժամանակ Նրէաստանի դատաւորը Պոնտացի Պիղատոսն էր: Նրէաները նրան պէտք է հնազանդէին: Կայսրը նրան էր իրաւունք տուել յանցաւորներին մահի պատիժ նշանակելու, որովհետեւ նա էր երկրի ամենաբարձր իշխանաւորը — նա կայսրի փոխանորդն էր:

Պոնտացի Պիղատոսն էր ժողովում նոյնպէս այն հարկը, որ Նրէաները պարտաւոր էին տալ կայսրին: Թէև Նրէաները հարկ տալու յօժար չէին, բայց ստիպուած էին հպատակել իշխանութեանը: Իսկ եթէ նրանցից մէկը սսէր. «Ես չեմ կամենում հարկ տալ, մեզ օտար կայսր հարկաւոր չէ», — այն ժամանակ Պիղատոսը նրան կասէր. «Դու խռովարար ես, ժողովրդին մոլորեցնում ես — դու պէտք է մեռնես»:

Խռովարարներին խաչին էին մեխում — խաչում էին: Այդ մի ամենասարսափելի ու ամենածանր մահն էր: Լսեցէք թէ այդ ինչպէս էին կատարում:

Գեանի մէջ երկու մարդու բարձրութեամբ մի փայտեայ խաչ էին կանգնեցնում: Յանցաւորին բարձրացնում էին էին այդ խաչի վրայ: Առաջ նրա ձեռքերը կապում էին խաչի վերին մասի փայտին, յետոյ առնում էին երկու մեծ մեխ և նրանցով մեխում էին ձեռքերը այդ փայտին՝ ափերի միջով: Ի՞նչպիսի սաստիկ ցաւ պիտի պատճառէր այդ Բայց այս դեռ բոլորը չէ: Ոտքերն էլ միեւնոյն կերպով ամրացնում էին մեծ-մեծ մեխերով, այնպէս որ խաչուածը թէ ձեռքերով և թէ ոտքերով մեխուած էր լինում խաչին: Օ՛հ, ինչ մեծ ցաւ կրողար նա իւր վերքերից: Խեղճ էր կարող ոչ մի փոքր շարժում անդամ անել: Նա խաչի վրայ կախուած էր և կարող էր միայն հառաչել ու ողբալ: Գէթ շուտով մեռնէր խեղճ տանջուողը, որպէսզի վերջ դրուէր նրա չարչարանքին: Բայց խաչուածը իսկոյն վերջ մեռնում, այլ սարսափելի տանջանքների մէջ կախուած չէր մեռնում, այլ սարսափելի ձգում էր և դեռ աւելի: Այդ մի մտում էր երբեմն մի ամբողջ օր և դեռ աւելի: Այդ մի այնպիսի պատիժ էր, որի մասին միայն մտածելը ամենի վրայ սարսափ էր ձգում: Ահա այդպիսի ծանր մահ պիտի ընդունէր մեր սիրելի Տէրը:

Ձիւղորդները տարան Յիսուսին կապած՝ ինչպէս չարագործի ու մարդասպանի, քահանայապետների ու փարիսեցիների մօտ: Նրանք ամեն կերպ աշխատում էին Յիսուսի վրայ մի յանցանք դանել, բայց չէին կարողանում: Այն ժամանակ նրանք մի քանի չար մարդ գտան, որոնք պէտք է նրա մասին սուտ խօսէին — սուտ վկայութիւն տային: Այնուհետև նրանք ճանապարհ ընկան Պիղատոսի

մօտ: Այժմ տեսնենք թէ ի՞նչ սասցին նրանք Տէր Յիսուսի մասին և ի՞նչպէս վարուեց Պիղատոսը:

12.

«Ճշմարիտ որ Սա արդար էր և Աստուծու Որդի էր» — այդպէս սասցին Յիսուսի խաչի մօտ կանգնած հարիւրապետը և զինուորները՝ երբ տեսան նրա սարսափելի մահը: Անշուշտ նրանք այդ կը պատմէին քահանայապետներին և զպիւրներին:

Ուրբաթ, երեք ժամին Յիսուս մեռաւ: Երեկոյեան եկան Յիսուսի ծածուկ աշակերտները Յովսէփը ու Նիկոզիմոսը և թաղման պատրաստութիւնը տեսան: Ամենից առաջ նրանք թաղելու իրաւունք ստացան Պիղատոսից, յետոյ խաչից իջեցրին մարմինը, անուշահոտ իւղերով օծեցին և մաքուր կտաներով փաթաթեցին: Այսպէս թաղում էին միայն ամենահարուստ ու նշանաւոր մարդկանց: Սրանով Յիսուսի ծածուկ աշակերտները կամեցան ցոյց տալ իրանց մեծ սէրը դէպի Յիսուս: Յիսուսի զերեզմանն էլ մեր զերեզմանների նման չէր: Յովսէփը Գողգոթայի մօտ մի պարտէզ ունէր: Այդ պարտիզում նա փորել տուեց մի նոր զերեզման, որ նման էր մի փղբրիկ այրի: Ահա այդ զերեզմանում դրին Յիսուսի մարմինը: Բայց որպէսզի ոչ ոք այնտեղից մեռելին չը տանի, Յովսէփը մի մեծ քար դրոյեց զերեզմանի դրանը:

13.

Երբ մեզ մօտ մինը մեռնում է և նրան թաղում ենք, թաղման հետեւեալ օրը զնում ենք քահանայի հետ

նրա զերեզմանը և կատարում այնտեղ օրէնքով սահմանուած կարգը: Նոյնպէս, ցանկանալով ցոյց տալ մեր սէրը դէպի մեռածը, նրա զերեզմանը զարգարում ենք ծաղիկներով: Այդ մեր օրէնքն է և մեր սովորութիւնը: Հրէաներն էլ ունէին իրանց սովորութիւնը: Նրանք թաղման հետեւեալ օրը զնում էին զերեզմանը և անուշահոտ իւղերով վերջին անգամ օծում էին մեռածի մարմինը:

Յիսուսի թաղմանը ներկայ էին նաև երեք կին՝ Մարիամ Մաղդաղէնացին, միւս Մարիամը և Սոդոմէն: Սրանք միշտ Յիսուսի հետ էին լինում, լսում էին նրա քարոզները և սրտանց սիրում էին նրան: Երբ Յիսուսին թաղեցին, նրանք պատրաստեցին անուշահոտ իւղեր, որպէսզի հետեւեալ օրը զնան զերեզմանը և վերջին անգամ ցոյց տան Յիսուսին իրանց մեծ սէրը: Բայց հետեւեալ օրը շաբաթ էր, հրէաների կիրակին: Այդ օրը ոչ ոք իրաւունք չունէր զերեզմանը զնարու: Դրա համար էլ նրանք պատրաստուեցին զնալ այնտեղ կիրակի առաւօտ: Տեսնենք կարողացան նրանք իրանց ցանկութիւնը կատարել, թէ ոչ:

14.

Յիսուսին բռնակույ յետոյ մենք ոչինչ չենք լսել նրա աշակերտների մասին.— ո՞րտեղ էին նրանք: Երբ Յիսուսին՝ ձեռքերը կապած տարան դատաւորի մօտ, աշակերտները մտածեցին, որ ամեն ինչ կորած է, որ այժմ իրանց հետ էլ այնպէս կը վարուին, ինչպէս իրանց Տիրոջ հետ: Այս պատճառով նրանք մեծ երկիւղի մէջ էին— փախան և թաքնուեցին: Իսկ ընդհակառակը ի՞նչպէս վարուեցին Յիսուսի ծածուկ աշակերտները:— Վերջապէս կի-

բակի առաւօտար նրանք ուրախ լուր լսեցին — Տէրը յարութիւն է տուել գերեզմանից: Նրանք հրէաների երկիւղից ծածուկ հաւաքուեցին մի ասն մէջ՝ զոները փակած և ամեն մինը պատմում էր իւր լսած ու տեսածը: Այժմ՝ լսենք պատմութիւնը:

15.

«Գնացէք, քարոզեցէք բոլոր ժողովուրդներին» և այլն: Այսպէս ասաց Յիսուս աշակերտներին համբարձման օրը: Ուրեմն առաքեալները հրաման ստացան քարոզելու ոչ միայն հրէաներին, որոնց մէջ իրանք ապրում էին, այլ և միւս բոլոր երկիրների ժողովուրդներին էլ: Բայց ամեն մի ժողովուրդ խօսում է իւր մայրենի լեզուով: Ուստի չի հասկանում հային, որը խօսում է հայերէն, գերմանացին չի հասկանում ֆրանսիացուն, որը խօսում է ֆրանսերէն: Որպէսզի առաքեալները կարողանային բոլոր ժողովուրդներին քարոզել, պէտք է խօսէին էլ բոլոր լեզուներով: Արդեօք առաքեալները այն միւս ժողովուրդների լեզուն գիտէին: — Ոչ, չը գիտէին: Նրանք խօսում էին միայն այն լեզուով, որի մէջ ծնուել էին:

Բացի սրանից ուրիշ երկիրներում, ուրիշ մարզկանց մէջ՝ Յիսուս Քրիստոսի մասին քարոզելու ժամանակ, նրանք շատ փորձանքների կարող էին պատահել, թշնամիներ ունենալ: Արդեօք նրանք աներկիւղ են, քաջ են: — Ոչ, ոչ: Միայն Յովսէփն ու Նիկողիմոսը ցոյց տուին ամբողջ աշխարհին, որ իրանք Յիսուսի աշակերտներն են, որովհետև նրանց սերը գէպի Յիսուս իսկական էր — անկեղծ էր: Ուրեմն աշակերտները իրանց սրտերում ան-

կեղծ սէր չունէին. և այդ ոչ միայն գէպի Յիսուս էր, այլ և գէպի իրար: Նրանց մէջ կար մեծամտութիւն ինքնասիրութիւն, և այդ բանից երբեմն պատահում էր մէջները հակառակութիւն և վեճ: Արդեօք այդպիսի սիրտ ունեցող մարդիկ կարճօղ էին բարի օրինակ տալ ուրիշներին, ինչպէս որ անում էր Յիսուս: — Ոչ, չէին կարող: Ուրեմն նրանք պէտք է փոխուէին — նոր հոգի և նոր սիրտ ստանային:


» Երուսաղէմից մի հեռանաք, այլ սպասեցէք Սուրբ Հոգու գալստեանը» — ասաց Տէրը և յետոյ շարունակեց. «Նա ձեզ զօրութիւն կը տայ և զուք իմ մասին կը քարոզէք Երուսաղէմում, ամբողջ հրէաստանում և բոլոր միւս երկիրներում»:

Այն «Սուրբ Հոգին», որ ուղարկելու էր նրանց համար Տէրը, սուղու էր նրանց զօրութիւն, որով կը ստանային նրանք նոր հոգի և նոր սիրտ: Առաջ նրանք զիտութիւն չունէին. Սուրբ Հոգին պէտք է նրանց զիտութիւն տար և ամեն բան սովորեցնէր: Առաջ նրանք երկշտ էին և քաջութիւն չունէին. իսկ երբ կը ստանան Սուրբ Հոգու զօրութիւնը, նրանք զօրեղ և քաջ կը լինեն: Առաջ նրանք հաստատ հաւատ և անկեղծ սէր չունէին. — Սուրբ Հոգին նրանց այդ էլ կը տար: Նրանց նոր սիրտը պէտք է ունենար մի այնպիսի հասարակ հասարակ և անկեղծ սէր գէպի Յիսուս, որ ինչ էլ նրանց պատահելու լինէր, նրանք պատրաստ լինէին ամեն ինչ:

Յիսուսի համբարձումից յետոյ Նրա աշակերտները քնացին Երուսաղէմում, ինչպէս որ պատուիրել էր նրանց Տէրը: Նրանք հաւաքուել էին մի վերնատան մէջ և սպասում էին Սուրբ Հոգու գալստեանը: Համբարձման տաս-

8. Զատիկական ընթրիք և ոսնարուց	24
9. Սուրբ Հաղորդութիւն	25
10. Յիսուս Գեթեմանի պարտիզում	27
11. Յիսուսի խաչելութիւնը	28
12. Յիսուսի թաղումը	30
13. Յիսուսի յարութիւնը	31
14. Յիսուսի Համբարձումը	33
15. Հոգեգալուստ	34
1. Նախապատրաստութիւն	37





ՀԱՏՈՆՏԻՐ ԱՂՕԹՔՆԵՐ

ՀՍ.ՅԱՍՏԱՆԵՍ.ՅՅ

ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԳԵՐՁ ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ.

- Գրքի 1. Ս.-Պետերբուրգ, Священнику Хорену Мнаца-
канианцъ.
2. Тифлисъ, Центральная Книжная Торговля.

Ինչ դիմողները ճանապարհածախս չեն վճարում:

0
ՀՀ Ազգային գրադարան



NL0145979

